



# Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor  
Rev. Fr. DIRAN PAPAZIAN, Archpriest  
Տ. ՏՈՐԱՆ ԱՌ. ԸԶՆՅ. ՓԱՓԱԶԵԱՆ, Հոգևոր

29 Դեկտ. 93

Գեր. Տ. Թաժուկ Արք. Կարսամեան,  
Առաջնորդ,  
և նիւ Երրի, Ն.Յ.,

Սիրելի Արքայան,

Սոյն գրով կը փութանք յայտնել ձեզ թէ՛ ստացած ենք ձեր դիտողագիրը, ի մասին քաղաքական կուսակցութեան մը վերաբերող դասախօսական մէկ ձեռնարկը ծանուցող թողոցիկներու բաշխման թոյլտուութեան՝ եկեղեցւոյս սրահէն ներս, Կիրակնօրեայ պաշտամունքէ մը վերջ, հիւրասիրութեան պահուն, ինչպէս նաեւ նոյն ձեռնարկին ծանուցման տեղ տրուած ըլլալուն համար եկեղեցւոյս Կիրակնօրեայ պաշտարանին մէջ:

Ըսեմ ամիջապէս ի միամտութիւն ձեզ որ՝ սոյն հարցը ծրարաններու խմբակի մը անունով՝ զրաւորապէս ուշադրութեանը բերուած էր ծիսական Խորհուրդին, եւ ծիսական Խորհուրդը իր նիստին մէջ արդէն իսկ համապատասխան որոշում առած էր առ այն թէ՛ այսուհետեւ չթոյլատրուի քաղաքական բնոյթով ծանուցագրերու բաշխումը եկեղեցւոյ սրահէն ներս եւ անհարկի վրդովմունքի առիթ չտալ ծիսականներու, ինչպէս նաեւ զգուշանալ նման ծանուցումներու տեղ տալէ Կիրակնօրեայ պաշտարանին մէջ:

Կնկարներ սակայն հետեւեալ բացատրութիւնը տալ սոյն պատահարին նկատմամբ: Նախ այն որ՝ սոյն թողոցիկներու բաշխման վերաբերմամբ մենք անտեղեկ էինք: Իսկ ինչ կը վերաբերի եկեղեցւոյս Կիրակնօրեայ պաշտարանին մէջ ծանուցումներ տրուումին, քսենք որ՝ անոր տեղ տրուած էր պարզապէս իբրեւ դասախօսական ծանուցում մը, լուրի ձեւով՝ որ տեղի կ'ունենայ Շիրակոյի Հայ գաղութի կեանքէն ներս: Այլապէս մենք շատ լաւ գիտենք որ՝ մեր ծիսական համայնքէն այդքան հեռու գացող չի կայ եւ ոչ ալ հետաքրքրուող կայ, բացի մի քանի հոգիներէ որոնք այդ ծանուցումին սպասելու պէտքը չունենին: Այսուհանդերձ կ'ընդունինք որ՝ պէտք էր թերեւս աւելի զգոյշ շարժէինք եւ անփոյթ չզոնտէինք՝ նկատի առնելով անոր քաղաքական կուսակցական կազմակերպութեան մը ձեռնարկը ըլլալու հանգամանքը: Յամենայն դէպս, ինչպէս վերեւ յիշեցինք՝ յետ այսու կը ջանանք աւելի զգուշաւոր ըլլալ եւ խուսափիլ նման սայթաքումներէ:

Քայց եւ այնպէս թող թոյլ տրուի մեզի ընել սա մատնանշումը: Մեզ համար մի քիչ դժուար է հասկնալ բողոքող խմբակին շարժառիթը: Արդէն անոնք յայտներ էին իրենց գանգառը առ ոտս ծիսական խորհուրդին եւ ծիսական խորհուրդն ալ համապատասխան որոշում կայացուցած էր, ալ ի՞՞՞ջ հարկ կար փութկոտութեամբ ձեզի եւս միանգամայն՝ սոյն պատահարին մասին բողոքելու եւ ձեզ ձեր բազմաբաղ Վիճակին մէջ անհանգիստ ընելու, եւ պարզամտօրէն պատահած դէպք մը անհարկօրէն խոշորցնելով: Բան մը որու կարիքը չի կար երբէք, քանի որ տեղւոյն վրայ լուծուելիք հարց մըն էր եւ ծիսական խորհուրդը արդէն իսկ հարկ եղած քայլը առած էր: Կրնար այս խմբակը մի քիչ համբերութեամբ իրագրել դառնալ ծիսական խորհուրդի որոշումին, եւ զոհացում չստանալու պարագային միայն դիմել ձեզի, տարրական բան մը զոր չեն ըրած եւ ձեզի ալ վրդովմունք պատճառած են ի գուր տեղը:

Շնորհակալութիւն ձեր ունկնդրութեան համար սոյն բացատրողագրին:  
Տօնական օրերու լաւագոյն բարեմադրութիւններով, Խոնարհաբար

*Տ. Թորան Արք.*  
Տ. Թորան